ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2020-2022թթ. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ (հունվար-հոկտեմբեր)





2022թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 1 տրիլիոն 754.9 մլրդ դրամ, ինչը 882,9 մլրդ դրամով կամ 101,3%-ով ավել է 2021թ. և 1 տրիլիեն 32.2 մլրդ դրամով կամ 142.8%-ով ավել է 2020թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-սեպտեմբերի ցուցանիշից մեծ է 249 մլրդ դրամով կամ 16.5%-ով: 2022թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից արտերկիր է փոխանցվել 873.3 մլրդ դրամ, ինչը 376.6 մլրդ դրամով կամ 75.8%-ով ավել է 2021թ. և 404.8 մլրդ դրամով կամ 86.4%-ով ավել է 2020թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-սեպտեմբերի ցուցանիշից ավել է 110.3 մլրդ դրամով կամ 14.5%-ով: 2022թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 881.6 մլրդ դրամ, ինչը 506.3 մլրդ դրամով կամ 134.9%-ով ավել է 2021թ. և 627.4 մլրդ դրամով կամ 246.8%-ով ավել է 2020թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-սեպտեմբերի ցուցանիշից ավել է 137.7 մլրդ դրամով կամ 18.5%-ով:

2022թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 4 մլրդ 79.6 մլն դոլար, ինչը 2 մլրդ 357.4 մլն դոլարով կամ 136.9%-ով ավել է 2021թ. և 2 մլրդ 589.7 մլն դոլարով կամ 173.8%-ով ավել է 2020թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-սեպտեմբերի ցուցանիշից ավել է 618 մլն դոլարով կամ 17.9%-ով: 2022թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից արտերկիր է փոխանցվել 2 մլրդ 23.2 մլն դոլար, ինչը 1 մլրդ 43.9 մլն դոլարով կամ 106.6%-ով ավել է 2021թ. և 1 մլրդ 56.9 մլն դոլարով կամ 109.4%- ով ավել է 2020թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-սեպտեմբերի ցուցանիշից ավել է 276.1 մլն դոլարով կամ 15.8%-ով: 2022թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 2 մլրդ 56.4 մլն դոլար, ինչը 1 մլրդ 312.5 մլն դոլարով կամ 176.4%-ով ավել է 2021թ. և 1 մլրդ 532.8 մլն դոլարով կամ 292.7%-ով ավել է 2020թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-սեպտեմբերի ցուցանիշից ավել է 341.9 մլն դոլարով կամ 19.9%-ով:

*** Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի արտաքին հատվածի վիճակագրության հրապարակումները՝ ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ**